

ընդարձակ անդառառները : — Զորքորդ՝ Մազազ (Գառնի) գաւառին մէջ, որ ըստ Սիման կաթողիկոսի՝ Այրի վանաց կարուածներէն մին էր : Տեղագրութիւն 214 : Այրաւատ 112, 119, 158, 334, 349 :

— Սիւնեաց մէջ վեց հատ . մին՝ յԱրեւիք, կարճաւանի հիւսիսային և փարախ լեռան հարաւակողմը . մօտերը կը գտնուի կապարահանք : Միւսներն են Բաղք, Ճահուկ, Խօք, Հաքանդ և Վայոց ձոր գաւառաց մէջ, որոց վրայ նշանուոր գիտելիք չկայ : Այս գիւղերէն ոմանք՝ ըստ հին ցուցակաց հարկատու եղած են Սիւնեաց եկեղեցոյն : Սիսուկան, 98, 255, 274, 302, 484, 505 : — Զորքորդ Հայոց Ծովք գաւառի, այժմեան Չմկեծածոց նոր վիճակի մէջ ալ կայ Ազարակ գիւղ մը, որոյ բնակիչք խառն են Հայք և Քուրդք : Հայք ունին գեղի ծայրը հնազոյն եկեղեցի մը, որոյ մօտէն կը բղխեն սառնորակ, ջինջ և աղաւ ջրոց երկու ափունք, որոց միոյն Ակնէիէտը կ'ըսեն, ալանջաւոր բուծելուն համար : Ուրիշ աղբիւր մ'ալ կայ քեղէն վար, զոր Դողի աղբիւր կը կոչեն . սրոյ ջրով կը լուացուին ջերմ ունեցողներն և կը բժշկուին : Գեղս ունի սքանչելի դիրք, ընդարձակ գերեզմանատուն, հրապուրիչ տեսարաններ, երկիրն ալ բերրի է : Ի հնումն հարիւրաւոր տներէ բաղկացած հայաբնակ մեծ գիւղ մ'էր սա, որ այժմ՝ գրեթէ բոլորովին օտարացած է : Գիւղիս մօտ է Կարմիր վանք, խեղճ դրէց մէջ : — Տես ի կարգին : Թոր. Աղբ. 113-4 :


— Բարձր Հայոց Եկեղեցաց (Երզնկա) գաւառի մէջ եւս կայ Մեծ Ագարակ հայաբնակ գիւղ մը, բն. 400 . ուրիշ մ'ալ Հոռոմ Ագարակ : — Գուգարաց Տաշիք գաւառն եւս ունի Ագարակ անուամբ գիւղ մը Լոռոյ ձորոյն եզերքը, որոյ երկիրը բերրի է : Գիւղի մօտ է ճգնաւորի մը մենարանը, որոյ առջեւն քաղցրահամ ջրոյ վտակ մը կը վազէ և ջրաղացներ կը դարձնէ : Կաւանդուի՝ թէ վտակս բղխած է սուր ճգնաւորին աղօթիւք : Չայալեան, Ճանապարհորդութիւն, մասն Ա. 125 : — Համանուն գիւղեր կան նաեւ Ծորոփոր և Զորոփոր գաւառաց մէջ . ինչպէս նաեւ Տայոց Պարսիզացփոր (Օլթի) գաւառին մէջ,

և այլուր : Տես Ձիֆուիկ : — Վերոյիշեալ գիւղերու ոմանց մօտէն կ'անցնին Ագարակ անուամբ գետակներ, որոց վրայ յիշատակութեան արժանի բան չկայ :

ԱԲ կամ ԱԲ-ԳԱԼԷ (Սպիտակ բերդ) . — Բերդաւոր գիւղ Սիւնեաց Գեղաքունի գաւառի մէջ, Գեղամայ ծովակի արեւմտեան կողմը ցամաքակղզոյ մը վրայ . ունի ՅՈՒՆ աւելի տներ : Նշանաւոր և յիշատակաց արժանի են շուրջը ցրուած հայկական հին աւերակներ : — Սիսական 40 . Տիպուա, Գ. 312 :

— կամ ԳՈՒԼԷ . — Բերդ ծովային կիլիկիոյ, Լամուր հարաւային կողմը, բաղկացած է կրկին կոփածոյ բարակերտ շէնքերէ : Հին անունն յայտնի չէ, և այժմ՝ ամայի դրէց մէջ կը գտնուի . նոր ուղեւորաց զննութիւնք թերեւս ժամանակաւ աւելի ընդարձակ տեղեկութիւն տան մեզ ասոր նկատմամբ : — Սիսուան, 347 : — Ագ-գուշէ, հայաբնակ գիւղ մը եւս կայ՝ Այրարատայ Շիրակ գաւառի արեւելեան մասին մէջ, գրեթէ 55 տուն հայ բնակչօք :

Շարայարեւի



ԳԻՏՈՂԱՌԻԹԻԿԻ ԻՆՆ

ՊԱՏԿԵՐԻ ՄԻ ՀԱՏՈՒԱՍԻՆ ՎՐԱՅ

ՊԱՏԿԵՐ Հանդիսի անցած տարւոյ 11-14 թուոց մէջ Մեծ. Ս. Վ. Նաղարեթեան հրատարակեց « Հասուկոտորք Ս. Պատարակի և Ժամերու մատուցմամբ քրիստոնէութեան մատող սղոց մէջ » : Գրութիւնն ընդհանրապէս հմտայից է և շահեկան հետաւորէ : Բայց կան իւր մէջ ինչ ինչ կէտեր, որք, եթէ յարգելի հատուածագիրն աւելի խստութեամբ վարուէր իւր հետազոտութեանց մէջ, և ազգային աղեցնութիւնէ ազատ լինէր, լուսագոյն պայմանի մէջ կրնային հանդիսանալ : Այս հանգամանքն առիթ կու տայ մեզ՝ որ այդպիսի կէտերէն դոմանս ցոյց տանք հօս համառօտիւ :

ա. Ի հաստատութիւն այն կարծեալ թէ նախկին քրիստոնեայք ի կիրակէի կը պատահարգէին, ի միջի այլ վկայութեանց յառաջ կը բերէ և Ս. Իգնատիոսի մի խօսքը (յէջ 249) . որ սակայն բռնագործեալ է, ինչպէս ինքն իսկ կը գտայ, և անկարող նպատակու յիշեալ արդէն ընդունելի կարծեաց :

բ. Նոյն նպատակաւ դարձեալ կը յիշուի Յովհաննու աւետարանի այն խօսքը, թէ « յետ ութ ատուր դարձեալ էին ի ներքս (ժողովեալ) աշակերտորմ, և Թովմաս ընդ մոսա », և կը մեկնուի՝ թէ այդ « Ժողովեմն հացի բոկման մշամակ է » (249) . — Մեզ այդ ժողովուեմն պատարագի համար հասկանալ գտնարին է . այդ օրերն այդպիսի ի ներքս կամ զաղտնի հաւաքմանց կը լինէին վասն անոր հրէից ըստ աւետարանին, և ոչ վասն պատարագի : Յիսուսի մահուանէն խռոված և յարութեան յանկարծական լրէն շփոթած և դեռ կէս մի ամիսաւա (Յգ. աւետար.) և տղէ մտքերն, ինչպէս էին նուաքեալք, այդ զէպքերէն ութ օր անցած՝ Ինչպէս կրնային մտարերել պատարագելու : Մեզ հաւանելի չէ՝ որ առաքեալք նախ քան զհամարանալ փրկչին երբեք սուրբ խորհուրդ մատուցած լինին իրենց կողմանէ : Մի պատարագ կամ բեկումն հացի, որ կը յիշուի այդ աւուրց մէջ յմմատուս, ինքն Յիսուս անձամբ կատարեց :

գ. Քրիստոնէութեան սկիզբը միայն կիւրակէ պատարագելը (248) բացարձակ կարծիք չէ . Զէօրի (Fleury) միանգամայն ուրաթն այլ պատարագելի կը զնէ . և Պեղիկիա կը հաւատալ չորեքշաբաթի հաստատութիւնն եւս Բ դարուն : Այլ չեմք խօսիր Դ դարու մասին, յորում անո՞ծ էին պատարագի աւուրց : Բազմալիպի անցեալ ապրիլին արդէն խօսած էինք այս կէտիս վերայ :

դ. Մետաանկորդ դարէն սուսլ դր և է եկեղեցի ունեցած չէ կարծեմ այդ համապալարեալ (պատարագելու) սովորութիւնն (251) . — Բազմալիպի մէջ նոյն տեղը ցուցած ենք, թէ հանապազօրեան սկսած է Ս. Օգոստինոսի օրերէն, ըստ վկայութեան նոյն Հօր, և արեւմտեաց մէջ ընդհանրացած է Զ դարուն, նոյն գրութեան առանձին տպագրութեան մէջ յաւելլով առանձին աղբիւրներ, ըստ զն դասեմ և զրիգորեան սահմանաց : Եւ խօսելով Հայ եկեղեցւոյ մասին, ոչ սակաւ փաստիք հաստատած էինք հանապազօրեայ մատուցման ի մեզ գոյութիւնն իններորդ դարէն :

ե. Հին ժամանակ իններորդ ժամու պատարագը՝ կարծեմ աղոթացիցն էին և պահոց (293) : — Բազմալիպի նոյն հատուածի շարունակութեան մէջ (մայիս) օրինակօք ցուցած էինք՝ թէ շարաթ և կիւրակէ եւս կար

(Վարք. Հրց.), նոյն իսկ և ի մեզ Ժ դարուն. (Ուխտանէս) :

զ. Պատարագի այժմեան համառօտութիւնը տպագրի ժամագրոց մէջ չենք գտնիր ի հին գրչագիրս նախ քան ԺԶ դար . Նորահնար է այն, և ոչ թէ ի հնուց, և կը պահուի ի մեզ ցարդ իսկ, ըստ Պատկերին (292) :

է. Ի Ժուներ աղօթեալք միայն հոկման կամ պահոց սուրց յատուկ (291) չէր, այլ սովորական : Մրկ. Աբեղիոս կայսեր ժամանակ մեհարինացի քրիստոնեայ գօրքն երբ պատարագի պիտի մտնէին, նախ խոմարինցամ ծռներ եղին ի վերայ երկրի, որպէս և մեք աւ փորոգիսն ունեմք (և ոչ թէ միայն ի պահս) յաղթս կայրց, և աղայէին զԱստուած, կ'ըսէ Նստերի (Պտմ. եկեղ. Է, Ե) : Մերագիր աղօթեալք նոյն իսկ պատարագի արարողութեան մասն էր, ուրեմն և տէրունական աւուր յատուկ, դեռ յետ ժողովոյն Նիկիոյ Փաւստոս կ'աւանդէ՝ Մոփաց Մամբրէ վանուց մի պատարագչի համար, թէ իբրեւ ասաց Հայր մեր որ յերկիմս, եր ծռներ և կայր յաղթս յերկար. և մինչդեռ եղաք եր ծռներ և կայր յաղթս. և այլն (Է, ԻԸ) :

ը. Թիսուսի ծննդեան տօնին մեր եկեղեցւոյ մէջ՝ նման միւս մեծ տօնից՝ ցնծօրեան օրը (կիրակէ) չհանդիպելուն վրայ, քաւակամ զուցէ ըսեմ կասկածիմ՝ թէ չլլայ ընածիմն (250) : — Այդպիսի կասկած աւելորդ կը գտնեմք : Այս մասին եւս գրած է Բազմալիպի երկու հատուած (1897, մարտ), մին մեզմէ, և ցուցած՝ թէ Իւն դարուց մէջ և աւելի յառաջ մեր նախնիք համաձայն ընթացած են այլոց Հետ, մերթ յաւերարի վեցին տօնելով և մերթ զեկեղեցիների քան և Հնգին . այնպէս և յաջորդ դարք միշտ ամսոյ աւուր Հետ կապած են, և ոչ կիրակէի :

Կնքենք մեր խօսքը : Մեր կատարած դիտողութեանց մասին գէթ Բազմալիպի հատուածներն պէտք չէր որ անձանթ լինէին, և արդարեւ ոմանք յայտնի իսկ էին՝ Պատկերի Մեծ . Հատուածագրին : Այդ, նա ինչո՞ւ առանց լրեւուս նախ իրեն հակառակ փաստը, ափ յափոյ կարծիքներ կը յայտնէ :

Հ. ՎԱՐԻՐԱՆ ՀԱՅՈՒՆԻ

